ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԱԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԵՄՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի բնակչությունը ձևավորվել է հիմնականում Հայկական ՍՍՀ, միութենական այլ հանրապետությունների և արտասահմանյան երկրների քաղաքներից ու գյուղերից եկած հայերի ներհոսքի շնորհիվ[1]։ Եկվոր բնակչությունն ունենալով տարբեր սոցիալ-կուլտուրական հատկանիշներ, նոր պայմաններին հարմարվելու ընթացքում բազմազանություն է ներմուծում քաղաքում, ազդում նրա բնակչության սոցիալ-դեմոգրաֆիական կազմի և ապրելակերպի վրա։*

Երևանի ներկայիս սոցիալ-դեմոգրաֆիական կազմի ձևավորման մեջ վերաբնակիչների մասնակցությունը պայմանավորված է եղել բազմաթիվ գործոններով, որոնցից վճռորոշ են քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման բուռն տեմպերը և նորաբնակ խմբերի նախնական վիճակը։ Վերջինս, ի թիվս այլոց, պայմանավորել է վերաբնակիչների հետագա վարքը Երևանում։ Այդ իսկ պատճառով մայրաքաղաքի բնակչության ձևավորման հետազոտության համար նորաբնակների նախնական վիճակի ուսումնասիրությունը կարևոր է։

Պատմական հանգամանքների բերումով Երևանի բնակչությունը ձևավորվել է գլխավորապես հայ ժողովրդի ներկայացուցիչներից, որը և նրա ձևավորման պատմության յուրահատկություններից է[2]։ Երևանին նվիրված բազմաքանակ գրականության մեջ[3] նրա բնակչության ձևավորման հարցը հատուկ ուսումնասիրության առարկա չի եղել և քիչ է լուսաբանված, իսկ քաղաքի արդի բնակչության սոցիալ-կուլտուրական կերպարի և ապրելակերպի ձևավորման գործում միգրացիոն խմբերի տեղի և դերի հարցը բոլորովին չի շոշափվել։

---

[1] *Երևանի բնակչությունը 1926 թվականի առաջին մարդահամարից անցած հիսուն տարում աճել է ավելի քան 15 անգամ՝ 64613-ից հասնելով մեկ միլիոն մարդու։*

* *Հոդվածը շարադրված է Երևանի էթնոսոցիոլոգիական հետազոտման արդյունքների հիման վրա (օգտագործվել են մինչև 1976 թ. տվյալները)։*

[2] В. В. Покшишевский, Этнические процессы в городах СССР и некоторые проблемы их изучения («Советская этнография», 1969, № 5, стр. 10).

[3] А. П. Симонян, Ереван. Очерк истории, экономики и культуры, Ереван, 1963; «Экономика и культура города Ереван» (статистический сборник), Ереван, 1975; Т. Х. Акопян, Очерк истории Еревана, Ереван, 1977 и др.

1976 թ. «ՍՍՀՄ ազգերի զարգացման և մերձեցման սոցիալ-կուլտուրական պայմանների օպտիմիզացիա» համամիութենական ծրագրով[4] կատարվեց հանրապետության մայրաքաղաքի էթնոսոցիոլոգիական հետազոտություն[5]։ Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո վերաբնակիչների նախնական վիճակի և քաղաքի միգրացիոն կազմի պարզաբանման նպատակով հարցաթերթում ավելացվեց տեղափոխվելուց անմիջապես հետո վերաբնակիչների սոցիալ-դեմոգրաֆիական կազմը և նրանց «ելքի» վայրերը արտացոլող հարցերի խումբը։ Ընտրույթի բնույթը հնարավորություն տվեց արտացոլել քաղաքի արդի միգրացիոն կազմը և ստանալ ներկայացուցչական նյութ՝ նշված պրոբլեմի ուսումնասիրության համար[6]։ Նորաբնակները դասակարգվեցին ըստ հետևյալ խմբերի. 1. գյուղական վերաբնակիչներ, 2. քաղաքային վերաբնակիչներ Հայկական ՍՍՀ-ից, 3. քաղաքային վերաբնակիչներ ՍՍՀՄ այլ հանրապետություններից, 4. հայրենադարձներ արտասահմանյան երկրների քաղաքներից։

Հայկական ՍՍՀ-ի, միութենական այլ հանրապետությունների և արտասահմանյան երկրների գյուղերից եկածները միավորված են մեկ խմբի մեջ, քանի որ նրանք իրենց սոցիալ-կուլտուրական հատկանիշներով (սոցիալ-պրոֆեսիոնալ կազմով, ավանդական վարքով, լեզվով, կենցաղով և այլն) ունեն համանման գծեր և ընդհանուր առմամբ տարբերվում են քաղաքային վերաբնակիչներից, թեպետ և այդ խումբը ևս միատարր չէ և կազմված է տարբեր պատմաազգագրական շրջանների ներկայացուցիչներից։ Գյուղական վերաբնակիչների խմբերի միջև տարբերությունը հիմնականում ազգագրական բնույթի է, որն արտահայտվում է ծիսական, կենցաղային, վարքային, բարբառային և այլ ասպարեզների որոշ տարրերում, որոնք, բարբառից բացի, քաղաքային միջավայրում արագորեն համահարթվում են։ Սակայն գյուղից եկածները քաղաքում որոշ ժամանակ պահպանում են իրենց ծննդավայրին կամ ազգագրական շրջանին պատկանելու գիտակցությունը։

Հայկական ՍՍՀ քաղաքներից եկածները Երևան տեղափոխվելուց առաջ ապրել են հանրապետության փոքր և միջին քաղաքներում, որոնց բնակչությունը ազգային տեսակետից միատարր է[7]։ Այդ քաղաքները (բացի Լենի-

---

4 Ю. В. Арутюнян, Социально-культурные аспекты развития и сближения наций в СССР (программа, методика и перспективы исследования) («Советская этнография», 1973, № 3).

5 Երևանի բնակչության էթնոսոցիոլոգիական հետազոտումը կատարված է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիական խմբի կողմից՝ է. Տ. Կարապետյանի ղեկավարությամբ։

6 Երևանի բնակչության ընտրույթը կատարվել է նույն ձևով, ինչ մյուս քաղաքներինը՝ ՍՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի կոնկրետ սոցիոլոգիական բաժնի առաջարկած ընտրույթի համաձայն («Социальное и национальное», М., 1973, стр. 316—317). Հարցման է ենթարկվել 2000 մարդ։

7 1926 թ. հայերը ՀՍՍՀ-ի քաղաքներում կազմում էին 92,0%, իսկ 1970 թ.՝ 95,3% (հաշվարկված է ըստ հետևյալ ժողովածուների տվյալների. «Всесоюзная перепись населения 1926 года», т. XIV, отдел I, М., 1929, стр. 11—18; «Итоги всесоюзной переписи населения. 1970 г.», т. IV, М., 1973, стр. 304—305).

նականից) ձևավորվել են վերջին 30—40 տարվա ընթացքում[8], գլխավորապես Հայկական ՍՍՀ գյուղական բնակիչներից։ Վերաբնակիչների այդ խումբը դեռ ամբողջովին չի «կորցրել» գյուղական բնակիչներին բնորոշ կենցաղային և սոցիալ-կուլտուրական գծերը։ Միաժամանակ, քաղաքում ապրելու ընթացքում, նշված խումբը փոխել է ապրելակերպը, որակավորման մակարդակը, աշխատանքի պրոֆիլը և բնույթը։

ՍՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքներից եկածները Երևան են տեղափոխվել գլխավորապես Վրաստանի, Ադրբեջանի և ՌՍՖՍՀ-ի խոշոր արդյունաբերական կենտրոններից, որտեղ նախկինում հայկական մեծ գաղթօջախներ են եղել։ Այս խումբը եկել է այն քաղաքներից, որոնք աչքի են ընկնում ինդուստրացման բարձր մակարդակով, էթնիկական խայտաբղետությամբ, տեղի հայ գաղթօջախների նշանակությամբ՝ որպես հայ ազգի մշակութային կենտրոններ և այլն։ Այդ բոլորը ազդել են վերաբնակիչների նշված խմբի որակավորման, կրթության, ինտերնացիոնալ մշակույթի օգտագործման աստիճանի և վարքի նորմաների վրա։

Արտասահմանյան երկրների քաղաքներից եկածները (հայրենադարձները) հիմնականում ծագումով արևմտահայեր են, որոնք երկար ժամանակ բնակվել են Մերձավոր Արևելքի և Արևմտյան Եվրոպայի երկրներում, բայց պահպանել են իրենց լեզուն, ազգագրական յուրահատկությունները և ազգային առանձնահատկությունները։ Միևնույն ժամանակ նրանք այլ ազգի միջավայրում ձևավորված կենցաղի, վարքագծի և մշակույթի կրողներ են։ Հայրենադարձները Երևանում երկար ժամանակ պահպանում են տեղայնական զգացումը, որին նպաստում է նաև քաղաքում նրանց համախմբված բնակությունը[9]։

Աղյուսակ № 1

Վերաբնակիչների առանձնացված խմբերի տարիքային կազմը Երևան գալու պահին (տոկոսներով)

Վերաբնակիչների խմբեր	Մինչև 18 տարեկան	18—24 տարեկան	25—29 տարեկան	30—59 տարեկան	60 և բարձր տարիքի	Ընդամենը
Գյուղական վերաբնակիչներ	40,0	33,7	8,8	15,3	2,2	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՀՍՍՀ-ից . . .	35,5	35,2	10,9	17,4	1,0	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՍՍՀՄ տարբեր հանրապետություններից	38,7	34,0	8,4	16,0	1,9	100,0
Հայրենադարձներ	42,5	12,5	10,8	33,4	0,8	100,0
Ընդամենը	38,8	32,0	9,7	17,8	1,7	100,0

8 Հանրապետության ենթակայության 21 քաղաքներից 15-ը քաղաք են դարձել 1938 թ. հետո («Երեկոյան Երևան», 15.IV, 1978, «Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը», Երևան, 1976, էջ 9—11)։

9 Երևանում մինչ այժմ պահպանվում են հայրենադարձների թաղամասեր, ինչպես օրինակ՝ Նոր Արեշ, Նոր Արարկիր, Նոր Կիլիկիա, Նոր Մալաթիա, Նոր Մարաշ, Նոր Բութանիա, Նոր Զեյթուն և Նոր Սեբաստիա։

Քննարկենք վերաբնակիչների նշված խմբերի մի քանի հատկանիշները՝ Երևանում նրանց բնակության սկզբում։ Քաղաքում վերաբնակիչների մեկնակետերի կարևոր ցուցիչ կարող է լինել այդ խմբերի տարիքային կազմը Երևան գալուց անմիջապես հետո (տե՛ս աղյուսակ № 1)։

Ընդհանուր առմամբ, տեղափոխվելու պահին եկվորների բոլոր խմբերում առանձնանում են երեք կարգ։

Առաջինը կազմում են ծնողների խնամքի տակ գտնվող վերաբնակիչները։ Այս կարգի մեջ է մինչև 18 տարեկանների մեծ մասը։

Երկրորդ կարգը միայնակներն են։ Սրա մեջ են մտել տարիքային երկու խմբեր. մինչև 18 տարեկան հասակում տեղափոխվածների մի մասը և 18—29 տարիքային խմբի չամուսնացած տղամարդկանց և կանանց մեծ մասը։

Երրորդ կարգի վերաբնակիչները ընտանիքի կազմում գլխավոր կամ խնամակալներից մեկը եղողներն են։ Այս կարգի մեջ են 30—59 (17,8%) տարիք ունեցողները և ամուսնացած վերաբնակիչների մի մասը։

60 և ավելի բարձր տարիք ունեցող վերաբնակիչները ճնշող մեծամասնությամբ թոշակառուներ են։ Նրանց Երևան տեղափոխվելը պայմանավորված է երկու պատճառով. առաջին՝ տեղափոխություն ընտանիքով, երբ գլխավոր կամ հիմնական խնամակալը մեծ մասամբ որդին է կամ ավելի սակավ՝ դուստրը, երկրորդ պատճառը ծնողների տեղափոխությունն է քաղաքում ապրող երեխաների մոտ։ Բացի հայրենադարձներից, վերաբնակիչների նշված խմբերի տարիքային կազմը գրեթե միանման է։ Հայրենադարձները, որպես կանոն, Երևան են տեղափոխվել ընտանիքներով, ուստի նրանց տարիքային կազմը պայմանավորված է եղել ընտանիքի սերնդային կառուցվածքով, որի հետևանքով նրանք վերաբնակիչների բոլոր խմբերի մեջ ունեն «ամենածեր» տարիքային կազմը (աղյուսակ № 1)։ Այսպես, օրինակ, եթե 30—59 տարեկան հայրենադարձների տոկոսը կազմել է 33,4, ապա վերաբնակիչների մյուս խմբերում՝ 15,3—17,4։

Վերաբնակիչների տարիքը (հետևապես նաև տեղափոխման բնույթը) մեծ նշանակություն է ունեցել Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո նրանց աշխատանքի մեջ ներգրավելու գործում։ Բացի տարիքից, վերաբնակիչների աշխատանքային գործունեության մեջ մեծ դեր են խաղացել սեռը, սկզբնական բնակավայրը (նախկին բնակավայրերի ռեգիոնն ու տիպը) և տեղափոխվելու ժամանակը։ Ընդհանուր առմամբ քաղաքային վերաբնակիչների 41,9 և գյուղականի 38,8%-ը Երևան գալուց առաջ աշխատել են (աղյուսակ № 2)։ Աշխատող վերաբնակիչների տեսակարար կշռով առաջին տեղում են հայրենադարձները (հայրենադարձների 50,4%-ը տեղափոխվելուց առաջ աշխատել է), երկրորդ տեղում՝ ՍՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքներից եկածները (45,7%), երրորդում՝ գյուղերից եկածները (38,8%) և չորրորդում՝ Հայկական ՍՍՀ քաղաքներից եկածները (35,2%)։ Բացի այն վերաբնակիչներից, որոնք մինչև Երևան գալը աշխատել են, կա ևս մի խումբ, որի մեջ մտնողները սկսել են աշխատել տեղափոխվելուց անմիջապես հետո։ Այս խմբում ամենամեծ տոկոս են կազմում Հայկական ՍՍՀ քաղաքներից տեղափոխվածները (13,0%)։ Քաղաքային վերաբնակիչների մի մասը

Աղյուսակ № 2

Աշխատող և չաշխատող վերաբնակիչների առկոսային հարաբերակցությունը Երևան գալուց առաջ և հետո (տոկոսներով)

Վերաբնակիչների խմբերը	Բոլոր վերաբնակիչները	Այն վերաբնակիչները, որոնք այնտեղ են նոր քաղաք տեղափոխվելը			Ընդամենը	Ընդամենը նախկին գյուղատնտեսությամբ զբաղվողներ	Որոնցից		Ընդամենը նախկին գյուղատնտեսությամբ զբաղվողներ	Ընդամենը նախկին գյուղատնտեսությամբ զբաղվողներ
		Մայրաքաղաքում հաշիվ չունեցողներ	Մինչև 1 տարի գործած	Գյուղերում			Սկսել են գյուղատնտեսությամբ զբաղվել գաղթից առաջ	Աշխատում է գյուղատնտեսությամբ զբաղվել գաղթից հետո	Սկսել են գյուղատնտեսությամբ զբաղվել գաղթից հետո	Գյուղատնտեսությամբ զբաղվողներ գաղթից առաջ
Գյուղական վերաբնակիչներ	100,0	0,4	8,1	29,7	38,8	38,8	4,9	34,6	4,3	61,2
Քաղաքային վերաբնակիչներ (ՀՍՍՀ-ից)	100,0	—	30,4	4,8	35,2	48,1	13,0	35,2	—	51,9
Քաղաքային վերաբնակիչներ (ՍՍՀՄ այլ հանրապետություններից)	100,0	19,0	22,7	4,1	45,7	42,1	4,1	38,1	7,7	57,9
Հայրենադարձներ	100,0	15,7	28,1	6,6	50,4	47,9	4,1	43,8	6,6	52,1

(4,8%) իր աշխատանքային ուղին սկսել է գյուղում, իսկ գյուղից եկածների 8,5%-ը՝ քաղաքում։ Ըստ որում, նրանց զգալի մասը իր աշխատանքային գործունեությունը սկսել է այլ հանրապետության կամ երկրի մեծ քաղաքում կամ մայրաքաղաքում (10,0%)։

Տեղափոխվելուց անմիջապես հետո վերաբնակիչների զբաղմունքի բնույթը պայմանավորվել է նրանց սեռատարիքային կազմով։

Ըստ տեղափոխման ժամանակաշրջանների վերաբնակիչների զբաղմունքների բնույթի փոփոխության առավել լրիվ պատկերը բացահայտելու համար հաշվի է առնվել քաղաքի բնակիչների արդի սեռատարիքային հատույթը։ Վերաբնակիչների տարիքի մեծացման հետ ավելանում է տեղափոխվելուց հետո տնային տնտեսությամբ զբաղված կանանց տեսակարար կշիռը։ Ավագ և կրտսեր տարիքների վերաբնակիչների աշխատանքային ակտիվությունը զգալիորեն տարբեր է։ Այսպես, քաղաքի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում զբաղված էր կրտսեր տարիքի ներկայացուցիչների 16,5%-ը, իսկ ավագների՝ 49,4%-ը։ Տղամարդկանց մեջ նկատելի է ոչ աշխատանքային գործունեությամբ զբաղվողների (սովորողների) գերակշռություն կանանց նկատմամբ. կրտսեր տարիքում այն կազմում է 14,0%, իսկ ավագ տարիքում՝ 31,4%։ Տեղափոխվելուց հետո ժողովրդական տնտեսության մեջ զբաղված ավագ տարիքի տղամարդիկ կրկնակի գերազանցում են կանանց, մինչդեռ կրտսեր տարիքում սեռերի միջև այս հարցում տարբերություն գրեթե չկա (աղյուսակ № 3)։ Աշխատող վերաբնակիչների կազմում տարիքի փոքրացման հետ նվազում է այն անձանց տոկոսը, որոնք Երևանում սկսել են աշխատել սպասարկման ոլորտում, շինարարության մեջ, տրանսպորտում, հիմնարկներում, և փոխարենը ավելանում է արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը։ Դա ավելի նկատելի է կանանց, քան տղամարդկանց մեջ։ Արդյունաբերական ձեռնարկություններում ավագ տարիքի աշխատողները կազմել են 24,4, իսկ կրտսեր տարիքինը՝ 52,5%։ Քաղաքի ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում ավագ սերունդն ունի առավելագույն, իսկ կրտսերը՝ նվազագույն ցուցանիշներ։ Կանանց մեջ, տղամարդկանց համեմատությամբ, ավելի մեծ տոկոս են կազմում արդյունաբերության մեջ ընդգրկված վերաբնակիչները։ Այսպես, օրինակ, ավագ տարիքային խմբում արդյունաբերության մեջ աշխատել է կանանց 28,2, իսկ կրտսեր տարիքում՝ 59,1%։ Երկու տարիքային խմբերում (18—29 և 30—49 տարեկան) արդյունաբերությունից հետո կանայք նախընտրել են աշխատել քաղաքի հիմնարկներում, իսկ 50 և ավելի տարիքային խմբում հիմնարկներում աշխատող կանայք ամենամեծ տոկոսն են կազմում։ Ավագ սերնդի թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք միատեսակ են տեղաբաշխված Երևանի ժողովրդական տնտեսության ճյուղերում։ Մինչդեռ մյուս տարիքային խմբերում տղամարդիկ կանանցից ավելի են նախընտրում արդյունաբերության մեջ և քաղաքի տնտեսության ինֆրաստրուկտուրայում (շինարարություն, տրանսպորտ) աշխատելը։

Այսպիսով, վերաբնակիչների զբաղմունքի բնույթը Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո պայմանավորվել է հետևյալ գործոններով. տեղափոխվելիս վերաբնակիչների սեռատարիքային կազմով, տեղափոխման

Աղյուսակ № 3

Վերաբնակիչների զբաղմունքի բնույթը քաղաք տեղափոխվելուց անմիջապես հետո, ըստ արդի սեռատարիքային հատույթի (տոկոսներով)

Սեռատարիքային խմբեր	Ընդամենը վերաբնակիչներ	արդեն չի աշխատում ամիսներից անմիջապես հետո	Բացակա է					Սրանցից աշխատում էին			
			մասնագիտանում էին	սովորում էին	զբաղվում էին տնային տնտեսությամբ	ՁԵՐԲԱԿՈՒՄ ԷԻՆ	ուսանողներ, մասնագիտանում էին ուսումնական հաստատությունում	արդյունաբերությունում	սպասարկման ոլորտում	շինարարությունում և տրանսպորտում	հիմնարկներում
18—29 տարեկան	100,0	83,5	16,7	73,9	9,4	—	16,5	52,5	5,0	17,5	25,0
Տղամարդ	100,0	84,7	19,0	81,0	—	—	15,3	44,4	5,6	33,3	16,7
Կին	100,0	82,4	14,6	67,0	18,4	—	17,6	59,1	4,6	34,5	31,8
30—49 տարեկան	100,0	58,8	18,6	60,9	20,2	0,3	41,2	45,2	11,0	21,0	22,8
Տղամարդ	100,0	51,9	14,3	85,7	—	—	48,1	46,2	7,7	31,6	14,5
Կին	100,0	64,6	21,5	44,1	33,9	0,5	35,4	44,1	14,7	8,8	32,4
50 և ավելի տարեկան	100,0	50,6	13,3	38,1	34,9	13,7	49,4	24,4	12,2	24,9	38,5
Տղամարդ	100,0	31,6	23,7	61,0	—	15,3	68,4	21,9	10,9	32,8	34,4
Կին	100,0	65,2	9,4	29,6	47,8	13,2	34,8	28,2	14,1	13,0	44,7
Ընդամենը	100,0	60,7	16,5	57,8	21,6	4,2	39,3	37,4	11,3	23,5	26,8
Տղամարդ	100,0	52,0	17,9	79,4	—	3,2	48,0	34,9	9,1	32,0	24,0
Կին	100,0	63,2	15,6	44,2	35,3	4,9	31,8	39,2	13,4	10,1	37,3

ժամանակաշրջանով[10] և քաղաքի տնտեսության ճյուղային կառուցվածքով[11]։

Երևանում վերաբնակիչների նախնական վիճակի ցուցիչ կարող է ծառայել տեղափոխվելուց անմիջապես հետո աշխատողների սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը (աղյուսակ № 4)։

Աղյուսակ № 4

Աշխատող վերաբնակիչների սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո, ըստ առանձնացված խմբերի և նրանց այժմյան վիճակի տարիքային հատուցքի (տոկոսներով)

Վերաբնակիչներն ըստ տարիքային խմբերի	Г₂, 1	В	Б	А	Ընդամենը
18—29 տարեկան					
Գյուղական վերաբնակիչներ	37,5	—	50,0	12,5	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՀՍՍՀ-ից	33,3	41,7	16,7	8,3	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՍՍՀՄ հանրապետություններից	31,6	—	26,3	42,1	100,0
30—49 տարեկան					
Գյուղական վերաբնակիչներ	44,4	8,3	22,3	25,0	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՀՍՍՀ-ից	38.2	20,6	10,4	30,8	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՍՍՀՄ հանրապետություններից	20,0	10,0	20,0	50,0	100,0
Հայրենադարձներ	60,0	26,7	13,3	—	100,0
50 և բարձր տարիք					
Գյուղական վերաբնակիչներ	83,5	7,5	2,5	7,5	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՀՍՍՀ-ից	45,9	6,6	11,5	36,0	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՍՍՀՄ հանրապետություններից	24,4	2,3	28,9	44,4	100,0
Հայրենադարձներ	62,8	16,3	16,2	4,7	100,0
Ընդամենը					
Գյուղական վերաբնակիչներ	59,8	6,9	17,2	16,1	100,0
Քաղաքային վերաբնակիչներ	40,2	4,5	24,1	31,2	100,0

Աշխատողները կազմել են բոլոր վերաբնակիչների 39,3 %-ը (տես աղյուսակ № 3)։ Վերաբնակիչների այդ կարգի սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը բնու-

10 Յուրաքանչյուր տարիքային խումբ բնական պատճառներով արտացոլում է որոշակի տեղափոխման ժամանակաշրջան։ Այսպես, օրինակ, Երևանի բնակչության էթնոսոցիոլոգիական հետազոտման նյութերից պարզվեց, որ ինչքան մեծ է տարիքը, այնքան վաղ է տեղափոխման ժամանակը։ 18—29 տարիքային խումբը մեծ մասամբ տեղափոխվել է վերջին 10—15 տարում, 30—49-ը՝ 1950—60-ական թվականներին, իսկ 50 և ավելի բարձր տարիքային խումբը՝ մինչև 1950 թ.։

11 Մայրաքաղաքի տնտեսական, սոցիալական և կուլտուրական զարգացման բուռն տեմպերը փոփոխություն առաջացրեցին նրա ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի մեջ և այդ պատճառով սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում քաղաքն ուներ ճյուղային տարբեր կառուցվածք։ Միգրացիոն հոսքերը, քաղաքի զարգացման տարբեր ժամանակներում ներմուծվելով քաղաք, տեղաբաշխվում էին քաղաքի ժողովրդական տնտեսության մեջ, ըստ նրա կառուցվածքի։

թագրվել է տեղափոխվելուց առաջ նրանց սոցիալական ակտիվությամբ և սերտորեն կապված է տեղափոխվելու ժամանակաշրջանի, նախկին բնակավայրի և ռեգիոնի (որտեղից տեղափոխվել են) սոցիալ-տնտեսական վիճակի հետ։

Գյուղական վերաբնակիչների սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը արտացոլում է սովետական իշխանության տարիներին գյուղի օրինաչափ զարգացման ուղղությունները։ Ինչպես երևում է № 4 աղյուսակից, եթե ավագ տարիքում գերակշռում են առանց որակավորման ֆիզիկական աշխատանք կատարողները (83,5%), ապա գյուղական վերաբնակիչների կրտսեր տարիքում դրանց տոկոսը կրճատվել է ավելի քան երկու անգամ (37,5%)։ Միաժամանակ, կրտսեր տարիքում ավելացել է ծառայողների և արդյունաբերական պրոֆիլով որակյալ ֆիզիկական աշխատանք կատարողների տոկոսը։ Երկրի գյուղական բնակչության սոցիալական կազմի փոփոխության ազդեցությունը գյուղական վերաբնակիչների կազմի վրա ակնհայտ է։ Նշելով ՍՍՀՄ գյուղական բնակչության սոցիալական կազմի զարգացման հիմնական ուղղությունները, Յու. Հարությունյանը նշում է. «...քաղաքի և գյուղի տնտեսական և մշակութային կյանքի հիմքի մերձեցման, քաղաքի և գյուղի միջև տարբերությունների վերացման և քաղաքային բնակչության տոկոսի հետագա ավելացման, գյուղատնտեսության էներգազինվածության և մեքենայազինվածության աճի հետ մեկտեղ, միաժամանակ բարդանում է գյուղական բնակչության սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը, կրճատվում է առանց որակավորման ֆիզիկական աշխատանքով («Գ» խումբ) զբաղվող մարդկանց թիվը, իսկ աշխատանքի որակավորված ձևերով («Բ» խումբ) զբաղվողները, ծառայողները («Ա»), մտավորականությունը («Ա») հետևողականորեն աճում են»[12]։ Սակայն ժամանակակից գյուղի՝ քաղաքից որոշ չափով ետ մնալը անդրադառնում է գյուղական վերաբնակիչների սոցիալ-պրոֆեսիոնալ կազմի վրա։

Քաղաքային վերաբնակիչների մեջ, բացի որակավորման բարձրացման ընդհանուր օրինաչափ պրոցեսից, կան որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են վերաբնակիչների նախկին բնակության քաղաքի տիպով և ռեգիոնների սոցիալ-տնտեսական հարաբերություններով։

Ինչպես արդեն նշվեց, ՍՍՀՄ հանրապետությունների քաղաքներից եկած վերաբնակիչները եկել են մեծ և միջին քաղաքներից։ Վերաբնակիչների այս խմբի սոցիալ-պրոֆեսիոնալ կազմում գերիշխում են արդյունաբերական թեքումով ֆիզիկական աշխատողները («Բ» խումբ) և մասնագետները («Ա» խումբ)։ Ըստ որում, այդ կարգի աշխատողները մեծ տոկոս են կազմում ոչ միայն կրտսեր, այլև ավագ տարիքում։ Այսպես, «Ա» խմբի աշխատողների տեսակարար կշիռը ավագ տարիքում կազմում է 44,4, իսկ կրտսեր տարիքում՝ 42,1%, այսինքն նրանց միջև տարբերություն գրեթե չկա։ Այս քաղաքներից եկած վերաբնակիչները զգալի դեր են խաղացել մեր մայրաքաղաքի սոցիալ-կուլտուրական, ինչպես նաև տնտեսական զարգացման մեջ։

Հայկական ՍՍՀ քաղաքներից եկած վերաբնակիչների խումբը իր սոցիալ-պրոֆեսիոնալ կազմով արտացոլում է հանրապետության ինդուստրացման

---

[12] Ю. В. Арутюнян, Социальная структура сельского населения СССР. М., 1971, стр. 73—75.

ընդհանուր միտումը։ Ըստ որում, ավագ սերնդում զգալի տոկոս են կազմում մասնագետները («Ա» խումբ)՝ 36,0%։

Հայրենադարձների սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը տարբերվում է մյուս խմբերից։ Այս խմբում գերիշխում են առանց որակավորման ֆիզիկական աշխատողները («Գ₂» խումբ) և արհեստավորները («Գ₁» խումբ)։ Այս խումբը հիմնականում ներգրավվել է քաղաքի ինֆրաստրուկտուրայի մեջ։

Այսպիսով, մասնագետների և որակավորված ֆիզիկական աշխատանքով զբաղվողների տոկոսով առաջին տեղում են այլ հանրապետությունների քաղաքներից եկածները, երկրորդում՝ Հայկական ՍՍՀ քաղաքներից տեղափոխվածները, երրորդում՝ հայրենադարձները և չորրորդում՝ գյուղական վերաբնակիչները։

Աղյուսակ № 5

Վերաբնակիչների ծնողների լեզվական իմացությունը, ըստ առանձնացված խմբերի, արդի տարիքային հատույթով (տոկոսներով)

Վերաբնակիչների խմբերը ըստ ժամանակակից տարիքային հատույթի	Հայրը				Մայրը			
	Հայերեն	Ռուսերեն	Այլ լեզուներ	Ընդամենը	Հայերեն	Ռուսերեն	Այլ լեզուներ	Ընդամենը
Գյուղական վերաբնակիչներ								
18—29 տարեկան	80,8	12,5	6,7	100,0	88,3	6,3	5,4	100,0
30—49 տարեկան	78,7	10,1	11,2	100,0	91,5	3,3	5,2	100,0
50 տարեկան և բարձր . . .	78,2	9,8	12,0	100,0	89,8	1,8	8,4	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՀՍՍՀ-ից								
18—29 տարեկան	83,3	9,8	6,9	100,0	90,8	5,1	4,1	100,0
30—49 տարեկան	71,7	14,5	13,8	100,0	80,7	8,2	11,1	100,0
50 տարեկան և բարձր . . .	78,4	12,0	9,6	100,0	90,3	6,2	3,5	100,0
Քաղաքային վերաբնակիչներ այլ հանրապետություններից								
18—29 տարեկան	53,3	33,3	13,4	100,0	54,7	32,1	13,2	100,0
30—49 տարեկան	63,0	26,2	10,8	100,0	71,6	19,8	8,6	100,0
50 տարեկան և բարձր . . .	68,7	18,0	13,3	100,0	72,7	15,1	12,2	100,0
Հայրենադարձներ								
30—49 տարեկան	63,1	1,5	35,4	100,0	64,1	3,1	32,8	100,0
50 տարեկան և բարձր	61,3	0,8	37,9	100,0	60,7	0,8	38,5	100,0

Ինչպես արդեն նշվեց, վերաբնակիչների խմբերի յուրահատուկ գծերից են այլազգի միջավայրում ձևավորված մշակույթի տարրերը։ Լեզուն այլազգի մշակույթի սպառման ուղիներից մեկն է, ուստի Երևան գալուց անմիջապես հետո վերաբնակիչների լեզվական վարքը կարող է այդ ազդեցության չափանիշ ծառայել։ Կարևոր ցուցիչ է ընտանիքի խոսակցական լեզուն, որը, ինչպես հայտնի է, որոշվում է ծնողների լեզվական վարքով։ Վերաբնակիչների ծնողների՝ լեզուների իմացության աստիճանը մասամբ հնարավորություն է տալիս բացահայտելու նրանց լեզվական վարքը Երևան տեղափոխվելիս։

№ 5 աղյուսակից երևում է, որ Հայկական ՍՍՀ-ից եկած վերաբնակիչների ծնողների մեջ երկլեզվությունը կամ բազմալեզվությունը սահմանափակ է, մինչդեռ հայրենադարձների և այլ հանրապետություններից եկածների ծնողները գիտեն երկու կամ երեք լեզու։ ՍՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքներից եկած վերաբնակիչների ծնողների և հայրենադարձների ծնողների լեզվական վարքում կան տարբերություններ, որոնք բացատրվում են հետևյալ պատճառներով։ Հայրենադարձների ծնողները ապրել են տարբեր ազգերի հարևանությամբ, որի հետևանքով նրանք հայերենից բացի գիտեն իրենց միջավայրի լեզուն և մեկ-երկու եվրոպական լեզու։ ՍՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքներից եկածների ծնողները, բացի հայերենից և բնիկ ժողովրդի լեզվից (վրացերեն, ադրբեջաներեն և այլն), գիտեն նաև ռուսերեն։ Այդ ռեդիոններից եկած վերաբնակիչների լեզվական վարքի վրա ծնողների լեզվական իմացության ազդեցության ցուցիչ կարող է լինել դպրոցական ուսուցման լեզուն։

Աղյուսակ № 6

Վերաբնակիչների առանձնացված խմբերի կրթության լեզուն (տոկոսներով)

Վերաբնակիչների խմբերը	Հայերեն	Ռուսերեն	Այլ լեզուներով	Ընդամենը
Գյուղական վերաբնակիչներ	92,8	4,2	1,0	100,0
Քաղաքային վերաբնակիչներ ՀՍՍՀ-ից	86,6	10,5	2,9	100,0
Քաղաքային վերաբնակիչներ (ՍՍՀՄ այլ հանրապետություններից)	49,5	49,1	1,4	100,0
Հայրենադարձներ	80,2	3,4	16,4	100,0

Երևանի արդի սոցիալ-կուլտուրական կերպարի ձևավորման գործում վերաբնակիչների առանձնացված խմբերի դերը և տեղը բացահայտելու համար հարկ է նաև պարզել այդ խմբերի տեղաբաշխումը քաղաքի արդի սեռատարիքային կազմում։

Յուրաքանչյուր տարիքային խումբ ունի տարբեր միգրացիոն կազմ։ № 7 աղյուսակի տվյալներից որոշակիորեն երևում է վերաբնակիչների տեսակարար կշռի նվազման հակում, որը բացատրվում է ժամանակի ընթացքում քաղաքում ծնվածների թվի ավելացմամբ։ Դրան օրինակ կարող է ծառայել վերաբնակիչների տեսակարար կշռի փոփոխությունը, կապված տարիքի փոփոխության հետ։ Տարիքի փոքրացմանը զուգընթաց նվազում է վերաբնակիչների թիվը և փոխարենը աճում է Երևանում ծընվածների քանակը (տես աղյուսակ № 7)։ Ավագ տարիքային խմբում (50 տարեկան և ավելի) Երևանում ծնվածները կազմում են 10,5%, իսկ կրտսեր խմբում՝ 59,4%։ Տարբեր ռեգիոններից եկած վերաբնակիչները տարբեր կերպ են տեղաբաշխված քաղաքի սեռատարիքային կազմում։ Տարիքի փոքրացման հետ նկատելի է քաղաքային վերաբնակիչների տոկոսի ավելացում։ Որքան մեծ է տարիքը, այնքան մեծ է տարբերությունը տղամարդկանց և կանանց միգրացիոն կազմերի միջև։ Այսպես, օրինակ, եթե կրտսեր տա-

Աղյուսակ № 7

Վերաբնակիչների առանձնացված խմբերի հարաբերակցությունը
Երևանի արդի բնակչության սեռատարիքային կազմում (տոկոսներով)

Սեռատարիքային խմբեր	Ընդամենը	Որոնցից				
		Գյուղական վերաբնակիչներ	Քաղաքային վերաբնակիչներ			Երևանի ուսանողներ
			ՀՍՍՀ-ից	ՍՍՀՄ այլ հանրապետություններից	Այլ երկրներից	
18—29 տ. խումբ						
Տղամարդ	100,0	17,0	12,6	10,6	—	59,8
Կին	100,0	12,9	15,5	13,5	—	58,1
Ընդամենը	100,0	15,0	13,8	11,8	—	59,4
30—49 տ. խումբ						
Տղամարդ	100,0	36,5	13,0	7,9	6,1	36,5
Կին	100,0	34,0	15,0	14,7	4,7	31,6
Ընդամենը	100,0	35,0	13,9	11,6	5,4	34,1
50 և ավելի տ. խումբ						
Տղամարդ	100,0	23,1	23,1	24,0	20,7	9,1
Կին	100,0	35,4	19,8	20,1	13,2	11,5
Ընդամենը	100,0	30,3	21,2	21,8	16,2	10,5
Ընդամենը						
Տղամարդ	100,0	26,4	15,1	12,4	7,1	39,0
Կին	100,0	28,0	16,6	15,9	5,6	33,9
Ընդամենը	100,0	27,2	15,6	14,0	6,2	37,0

րիքում վերաբնակ տղամարդկանց և կանանց առանձնացված խմբերի հարաբերակցությունը հավասար է, ապա ավագ տարիքում գյուղական կին վերաբնակիչները տղամարդկանցից ավելի են (տարբերությունը 12,3% է)։ Կանանց միգրացիոն կազմը տղամարդկանցից ավելի լավ է արտացոլում Երևանի բնակչության ձևավորման իրական պատմությունը, քանի որ Հայրենական մեծ պատերազմը աններդաշնակություն մտցրեց երկրի բնակչության (այդ թվում՝ Երևանի) տարիքային կազմում, հատկապես ազդելով տղամարդկանց տարիքային կազմի վրա։ Բացի այդ, կանանց երկարակեցության գործակիցը տղամարդկանց նույն գործակցից բարձր է։ Այդ բոլորը նպաստել է տղամարդկանց միգրացիոն կազմի փոփոխությանը և քաղաքում վերաբնակիչների տարբեր խմբերի մեջ տղամարդկանց տոկոսի նվազմանը։ Մանրամասնորեն քննարկենք ամեն մի տարիքային խմբի միգրացիոն կազմը առանձին վերցրած։

Առաջին տարիքային խումբը (18—29 տարեկան) ներկայացված է գյուղական վերաբնակիչներով և քաղաքային վերաբնակիչների երկու խմբերով՝ եկած Հայկական ՍՍՀ քաղաքներից և ՍՍՀՄ այլ հանրապետություններից։ Այս տարիքային խմբում քաղաքային վերաբնակիչները համեմատաբար շատ են, որը բացատրվում է ժամանակի ընթացքում միգրացիոն հոսքերում քաղաքային տարրի ավելացմամբ։ Այսպես, օրինակ, նշված խմբում քաղաքային վերաբնակիչները կազմում են 25,6, իսկ գյուղից եկածները՝ 15,0%։

30—49 տարեկան տարիքային խմբում, որտեղ ներկայացված են բոլոր վերաբնակիչները, մեծ է գյուղից եկածների տոկոսը։ Այդ տարիքային խմբի վերաբնակիչների տեղափոխվելու շրջանը համընկնում է հանրապետությունում ուրբանիզացման ամենից ինտենսիվ ժամանակաշրջանի հետ, երբ միգրացիոն հոսքերում գերակշռում էր գյուղական տարրը։

Վերջին տարիքային խմբում (50 տարեկան և ավելի), ինչպես և առաջինում, նկատվում է քաղաքից եկածների գերակշռություն, որը կապված է միութենական այլ հանրապետությունների և արտասահմանյան երկրների քաղաքներից հայերի զանգվածային ներհոսքի հետ։ Այդ խմբի միգրացիոն կազմը ամենախայտաբղետն է։

Աղյուսակ N 3

Տարբեր տիպի քաղաքներից եկածների հարաբերակցությունը սեռատարիքային հատույթով (տոկոսներով)

Սեռատարիքային խմբեր	Մեծ քաղաք կամ երկրի (հանրապետության) մայրաքաղաք	Միջին քաղաք	Փոքր քաղաք	Ընդամենը քաղաքային վերաբնակիչներ
18—29 տարեկան				
Տղամարդ	23,6	27,9	48,5	100,0
Կին	30,1	19,3	50,6	100,0
Ընդամենը	27,2	23,1	49,7	100,0
30—49 տարեկան				
Տղամարդ	29,1	19,4	51,5	100,0
Կին	22,8	36,8	40,4	100,0
Ընդամենը	25,5	29,3	45,2	100,0
50 և ավելի տարեկան				
Տղամարդ	25,9	28,9	45,2	100,0
Կին	34,3	26,6	39,1	100,0
Ընդամենը	30,2	27,7	42,1	100,0
Ընդամենը				
Տղամարդ	26,5	25,5	48,0	100,0
Կին	29,0	28,7	42,3	100,0
Ընդամենը	27,8	27,2	45,0	100,0

Երևանի արդի բնակչության միգրացիոն կազմը թերի կմնա, եթե նրանում չբացահայտենք տարբեր տիպի և մեծության քաղաքներից եկածների տեղը։ Բոլոր քաղաքային վերաբնակիչների 27,8%-ը եկել է ՍՍՀՄ այլ հանրապետությունների և արտասահմանյան երկրների մայրաքաղաքներից և խոշոր արդյունաբերական կենտրոններից, 27,2%-ը՝ միջին քաղաքներից և 45,0%-ը՝ փոքր քաղաքներից ու քաղաքատիպ ավաններից։ Միջին քաղաքը հիմնականում ներկայացնում են ՍՍՀՄ այլ հանրապետություններից, արտասահմանից և Հայկական ՍՍՀ երկու քաղաքներից՝ Լենինականից ու Կիրովականից եկած վերաբնակիչները։

Կանանց ավագ տարիքային խմբերում տղամարդկանց համեմատությամբ նկատելի է ավելի մեծ քաղաքների գերակշռությունը՝ որպես «ելքի» վայր։

Բոլոր տարիքային խմբերում փոքր քաղաքներից եկածները կազմում են քաղաքային վերարնակիչների մոտավորապես կեսը։ Մյուս երկու տիպի քաղաքներից եկածների տեսակարար կշիռը գրեթե միահավասար է։

Կազմելով ամբողջ բնակչության 63,0%-ը, վերարնակիչները, փաստորեն, Երևան քաղաքի արդի բնակչության կազմավորման հիմնական օղակն են եղել։ Ուստի աեղափոխվելուց անմիջապես հետո նրանց սկզբնական վիճակը մեծ նշանակություն է ունեցել Երևանի սոցիալ-կուլտուրական և անաեսական զարգացման համար։

Այսպիսով, վերարնակիչների առանձնացված խմբերը Երևանում ունեն դեմոգրաֆիական և սոցիալ-կուլտուրական պարամետրերի որոշակի տարբերություններ։ Այդ տարբերությունները պայմանավորված են նրանց նախկին սեգիոնի կամ բնակավայրի միջավայրով։ Քաղաքի և գյուղի սոցիալ-տնտեսական վիճակի սակարդակի տարբերությունը հետք է թողել այդ տիպի բնակավայրերից եկածների սոցիալ-պրոֆեսիոնալ կազմի վրա։ Քաղաքային վերարնակիչները Երևանում համեմատաբար ավելի շատ են ներգրավվել արդյունաբերության մեջ և հիմնարկներում, ունեցել են գյուղական վերարնակիչներից ավելի բարձր որակավորման ասաիճան և նրանց մեջ ավելի շատ են եղել երկու կամ ավելի լեզուների տիրապետողները։ Այդ բոլորը պայմանավորված էր այն քաղաքների մեծությամբ, էթնիկական խայտաբղետությամբ և ինդուստրացման մակարդակով, որտեղից նրանք տեղափոխվել են Երևան։ Դա երևում է Երևանում՝ Հայկական ՍՍՀ և միութենական այլ հանրապետությունների քաղաքներից եկած վերարնակիչների նախնական վիճակի լուսաբանման օրինակով։

ДЕМОГРАФИЧЕСКИЕ И СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЕ ПАРАМЕТРЫ МИГРАНТОВ В ЕРЕВАНЕ

РУБЕН КАРАПЕТЯН

Резюме

Основными источниками формирования населения Еревана являлись миграционные потоки армян из городов и сел Армянской ССР, других союзных республик и зарубежных стран. В современном возрастном разрезе каждое поколение мигрантов (при исследовании население города было сгруппировано в три возрастные группы — 18—29, 30—49 и 50 и старше) имеет свой период наибольшей интенсивности миграции: старшее поколение мигрантов переехало в город в основном до 1950 года, младшее — в последние 10—15 лет (данные до 1976 г.).

Социально-культурные позиции группы мигрантов в городе (семейный, возрастной, социальный состав, степень вовлеченности сразу после переезда в народное хозяйство города и характер занятий, языковое поведение), с одной стороны, определялись социально-экономическими условиями и национальным окружением среды «выхода», с другой — периодом переезда в город. Социально-экономическое развитие общества отразилось на социальных параметрах мигрирующих групп населения. Чем моложе возраст, тем больше проявляется тенденция сближения социально-культурных параметров различных групп мигрантов.